ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մայիսի 2016 թվականի N 135-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթների, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 358-Ա որոշման հավելվածի 1.2.1 կետի պահանջների՝ **որոշում եմ.**

1. 2016 թվականի մայիսի 19-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի ղեկավարությամբ անցկացնել հատուկ տակտիկական ուսումնավարժություն՝ <<*Կոտայքի մարզի բնակչության պաշտպանությունը հակառակորդի օդուժի հարձակման դեպքում*>> թեմայով:

2. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում անցկացվող հատուկ տակտիկական ուսումնավարժության անցկացման պլանը՝ համաձայն հավելվածի:

3. Նշանակել ուսումնավարժության ղեկավարի օգնական՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ՝ փրկարար ծառայության գնդապետ՝ *Ա. Մանուկյանին:*

4. Ուսումնավարժությանն ընդգրկել՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմը և բաղաքացիական պաշտպանության ծառայությունները,

2) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչությունը,

3) մարզային տարահանման հանձնաժողովը,

4) Հրազդան համայնքի տարահանման հանձնաժողովը:

5. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետը:

6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Գ. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի մայիսի 16
ք. Հրազդան

ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N 135-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՊԼԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՏՈՒԿ-ՏԱԿՑԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

Թեմա՝ *<<Կոտայքի մարզի բնակչության պաշտպանությունը հակառակորդի օդուժի հարձակման դեպքում>>* գործնականում իրականացնելով ազդարարման, պատսպարման և տարահանման միջոցառումներ:

Ուսումնական նպատակներն են՝

1. կատարելագործել արձագանքող ուժերի ղեկավար կազմի գործնական հմտությունները բնակչության պաշտպանության միջոցառումների կատարման ուղղությամբ,

2. ստուգել բաղաքացիական պաշտպանության ծառայությունների, կազմավորումների և տարահանման մարմինների պատրաստվածությունը ստեղծված իրավիճակներում իրենց առջև դրված խնդիրների կատարման ուղղությամբ,

3. ստուգել համապատասխան պլանների իրատեսությունը:

Ուսումնավարժությանը ներգրավում են՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմը, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչությունը, մարզային տարահանման հանձնաժողովը և Հրազդան համայնքի տարահանման հանձնաժողովը:

Տևողությունը՝ 19.05.2016թ., ժամը 10:00-14:40

Անցկացման վայրը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի վարչական շենք, Հրազդանի համայնքապետարանի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի վարչական շենք:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Հ/Հ	ԺԱՄԱ-ՆԱԿԸ (աստղա բաշխակ ան)	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1	2	3	4	5
1	10:00-10:10	Հակառակորդի օդային հարձակման անմիջական սպառնալիքի մասին մարզի ղեկավար կազմի ազդարարում և պատսպարում:	Տալիս է հրահանգ <<Օդային տազնապ>> ազդարարման ազդանշան հնչեցնելու մասին և հետևում մասնակիցների գործողություններին:	Կոտայքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կետն <<Արմենթել>> փակ բաժնետիրական ընկերության արևելյան տարածքային կենտրոնին տալիս է <<Օդային տազնապ>> ազդարարման ազդանշանը: <<Արմենթել>> փակ բաժնետիրական ընկերության արևելյան տարածքային կենտրոնի կողմից գործարկվում է կենտրոնի վարչական շենքի տանիքում տեղադրված էլեկտրական շչակը: <<Օդային տազնապ>> ազդարարման ազդանշանը ստանալով՝ 1-ին ուսումնական տեղամասում (ք.Հրազդան, Կենտրոն թաղամաս, Երիտասարդական կենտրոնի նկուղային հարկ) պատսպարվում է մարզպետարանի ղեկավար կազմը, 2-րդ ուսումնական տեղամասում (Հրազդանի համայնքապետարանի մանկապատանեական ստեղծագործական կենտրոնի նկուղային հարկում) պատսպարվում է Հրազդանի համայնքապետարանի ղեկավար կազմը:
2	10:10-10:40	Ղեկավար կազմի գործողությունները <<Օդային տազնապի ավարտ>> ազդարարման ազդանշանի դեպքում:	Տալիս է հրահանգ <<Օդային տազնապի ավարտ>> ազդարարման ազդանշան հնչեցնելու մասին և հետևում մասնակիցների գործողություններին:	Կոտայքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կետը կապի միջոցներով, դրանց բացակայության դեպքում սուրհանդակների միջոցով <<Օդային տազնապի ավարտ>> ազդարարման ազդանշանը հասցնում է Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Կոտայքի մարզային վարչությանը և պատսպարված ղեկավար կազմին: Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Կոտայքի մարզային վարչության շրջիկ խմբերը շարժական բարձրախոսային սարքերի օգնությամբ հաղորդում են <<Օդային տազնապի ավարտ>> ազդարարման ազդանշանը: Պատսպարված ղեկավար կազմը ստանալով <<Օդային տազնապի ավարտ>> ազդարարման

				ազդանշանը կազմակերպված դուրս է գալիս թաքստոցներից և վերադարձնում իրենց աշխատատեղեր:
3	10:40-12:10	Մարզի ղեկավար կազմի ազդարարում և հավաք:	Տալիս է հրահանգ մարզի ղեկավար կազմի ազդարարման և հավաքի վերաբերյալ և վերահսկում դրա կատարումը:	Կոտայքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կետն իրականացնում է մարզի ղեկավար կազմի ազդարարումը նշելով հավաքի վայրը: Ստանալով <<Հայտարարված է հավաք>> ազդանշանը ուսումնավարժության մասնակիցները ներկայանում են մարզպետարան խնդրադրման.
4	12:10-14:00	Տարահանման հավաքակայանի աշխատանքների ծավալում, տուժած և անօթևան մնացած բնակչության տարահանում:	Ներկայացնում է ռմբակոծության հետևանքով ստեղծված իրավիճակը և տալիս կարգադրություն տուժած և անօթևան մնացած բնակչության տարահանման միջոցառումների իրականացման վերաբերյալ: Հետևում է տարահանման հանձնաժողովի գործողություններին:	Ստանալով խնդրադրում՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քաղաքաշինության վարչությունը համագործակցելով <<Արմենթել>> փակ բաժնետիրական ընկերության արևելյան տարածքային կենտրոնի և <<Հայաստանի Էլեկտրական Ցանցեր>> փակ բաժնետիրական ընկերության <<Գեղամա>> մասնաճյուղի հետ 1-ին և 2-րդ ուսումնական տեղամասերը հարմարեցնում է, որպես պահեստային կառավարման կետեր: Անհրաժեշտության դեպքում հետագա կառավարումն իրականացվում է հարմարեցված պահեստային կառավարման կետերից: 3-րդ ուսումնական տեղամասում (Հրազդանի համայնքային դրամատիկական թատրոնի շենք)՝ մարզի տարահանման հանձնաժողովը՝ կազմակերպում է տարահանման հավաքակայանի աշխատանքների ծավալումը, վերահսկում և կոորդինացնում է համայնքային տարահանման հանձնաժողովի աշխատանքը, համայնքային տարահանման հանձնաժողովը կազմակերպում է վտանգավոր տարածքից տուժած բնակչության տարահանման միջոցառումները, տարահանման հավաքակայանի վարչակազմը՝ իրականացնում է տարահանվող բնակչության հավաքը և տեղափոխումը հավաքակայան, իրականացնում է ժամանած բնակչության ընդունումը, հաշվառումը և տեղաբաշխումը,

				ապահովում է հավաքակայանում հասարակական կարգի պահպանումը, ապահովում է հավաքակայանում հակահրդեհային պաշտպանությունը, ապահովում է սննդի և այլ նյութական միջոցների ընդունումը և բաշխումը, ապահովում է տեղեկատու սեղանի գործունեությունը, ապահովում է մոր և մանկան սենյակի գործունեությունը, ապահովում է բժշկական կետի գործունեությունը: Հայաստանի Հանրապետության Ոստիկանության Կոտայքի մարզային վարչության ուժերը բոլոր ուսումնական տեղամասերում իրականացնում են հասարակական կարգի պահպանման միջոցառումներ:
5	14:00-14:40	Ուսումնավարժության ավարտ և արդյունքների ամփոփում	Ուսումնավարժության ղեկավարը հայտարարում է ուսումնավարժության ավարտ: Գնահատում է ուսուցանվողների գործողությունները, նշում է թերությունները և տալիս հանձնարարականներ դրանց վերացման ուղղությամբ:	Մասնակցում են ուսումնավարժության ամփոփմանը: